№ 159 Օգոստոսի 27 (Սեպտեմբերի 8) 1881 Օգոստոսի 27 (Սեպտեմբերի 8) № 159

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարաբաղարացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մուռուտից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խնդիր։ Բուլգարիա։ Թիւրքիա։ Ֆրանսիա։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նկատողութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՒՌՈՒՏԻՑ

—

Օգոստոսի 18-ին

Մուռուտ գիւղը, որ գտնվում է Գանձակից մօտ 18 վերստ հեռաւորութեամբ, հարաւակողմն, ունի 19 տուն հայ ժողովուրդ։ Այս գիւղը կառավարվում է աղբիւրների ջրով, չունի ոչ դետ և ոչ դեռատ. այստեղ վարուցանքը դմեայ է (անջուր է)։ Գանձակեցիներից շատերը այստեղ են ամարանոց գնում։ Ով մի քանի տարի առաջ տեսել է այս գիւղին չրջապատած խիտ անտառը, այժմ չէ կարող իր աչքերին հաւատալ թէ գտնվում է նոյն գիւղում և իր առաջ երևող վարելահողերը երբեմն անտառի տեղ են բռնում. այստեղ չէ միայն որ մեր հայ գիւղացիք առ հասարակ անտառների հետ շատ թշնամաբար են վարվում. ուստի մեղադրենք....

Մուռուտը ունի մի հատ քարեայ եկեղեցի, նոր չինած, դեռ չօծված, չունի հաստատուն քահանայ. հովվում է մօտիկ Սուլուք գիւղի քահանան. սա էլ միայն տօն օրերն է գիւղում երևում. գիւղացիք մի տիրացու առաջարկելով խնդրում են հոգևոր իշխանութիւնից ձեռնադրել և նշանակել իրանց գիւղի վրա հաստատուն քահանայ, բայց նրա ձեռնադրութիւնը շատ է ուշանում։ Ասում են ուշանալու պատճառը ֆինանսային վկայականների բացակայութիւնն է։ Այս գիւղի եկեղեցում, որ մի և նոյն ժամանակ ուխտատեղի է գանձակեցւոց համար, ամսոյս 16-ին Աստուածածնայ տօնին մեծ բազմութիւն կար. ամեն տեղ կը լսէիք զուռնայ, քամանչայ, կը տեսնէիք վրաններ,—մի խօսքով այս գիւղը մի առանձին կենդանութիւն էր ստացել։ Իշխան Միք։ Պետ. Բեհբուդեանցի, աշխատութեամբ և գործակցութեամբ ամսոյս 17-ին մեր գիւղում կայացաւ ներկայացում յօգուտ Գանձակի օրիորդական դպրոցի։ Մուտք եղաւ մօտ 35 ռուբլ. խաղացվեց «Էլ չպրէս ինչ, կամ երկու սիրահարներ» կատակերգութիւն մի արարուածով, հեղին. Էմին Տէր Գրիգորեանցի և «Պատկերներ. Ջան գիւղում, կինոներ, Անի քաղաք, կենդանի պատկեր «Ոգի Հայաստանի»։ Ներկայացումը շատ գովելի չէր, մինչև անգամ քննութեան ենթարկելը աւելորդ եմ համարում, ըստ որում գործող անձինք գրեթէ մանուկներ էին, բացի պ. Ն. Երևանցեանցը, որը բաւականին լաւ կատարեց ծերունի Մելքօ հարուստ վաճառականի դերը։ Իսկ ինչ վերաբերվում էր կենդանի պատկերներին, աւելի ևս «Ոգի Հայաստանի», որը կատարեց տիկին Ա. Երևանցեանցը, հիանալի էր, հասարակութիւնը մեծ բաւականութեամբ հեռացաւ և երկար ժամանակ ծափահարութեամբ շնորհակալութիւն յայտնեց թէ տիկին Երևանցեանցին և թէ իշխան Բեհբուդեանցին։ Անտրակտներում ածում էր Շամիրի խումբը «Թառը»։ Ներկայացումից յետոյ խաղացին լեզգինկա պարը։

Տեսնենք Գանձակի թմրած հասարակութիւնը կը կարողանայ մի օգուտ քաղել իշխանի ներկայութիւնից, թէ դարձեալ իր հնադարեան քնով քնանալով, կը մոռանայ ամենայն ինչ։

Գանձակ քաղաքի հասարակութիւնը խոր քնով քնած է. մեզանում գտնվող ինտելիգենցիան կեանքից շատ հեռու ապրելով, մեռելութեան կէտին է հասած. նրանց արթնացնող է հարկաւոր։

Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Աբասթուման, 18 օգոստոսի

«Մշակի» 149 համարի առաջնորդող յօդուածից իմացանք, որ պ. Սանասարեանց մտադիր է Կարինի մէջ բանալ մի դպրոց։ Այդ լուրը մեզ առիթ է տալիս մի առաջարկութիւն անել, որը յուսով եմ առանց ուշադրութեան չի մնայ։

Էջմիածնի ճեմարանի վերաբերութեամբ վերջին կարգադրութիւնները մեզ հասկացրին արդէն թէ այսուհետև այդ հաստատութեան մէջ ինչ մարդիկ, ինչ ուղղութեամբ և հոգւով պէտք է գործեն։ Կը նշանակէ ուրեմն թէ ինչ մարդիկ այսուհետև այնտեղ այլ ևս չեն կարող գործել և իբրև պարզ հետևանք վերև ասված կարգադրութեան այս վերջիններս պէտք է հեռանան ճեմարանից։

Մի տարի սորանից առաջ լսեցինք, որ Էջմիածնից ուղարկվեցաւ Եւրօպա Խորէն վարդապետ Ստեփանէն մանկավարժութիւնը ուսանելու յատկապէս ճեմարանի համար, մի գովելի գործ, որ արել էր ճեմարանի կառավարութիւնը։ Հ. Խորէն վարդապետ այս սեպտեմբերի մէկին պէտք է լիներ Էջմիածին իբրև ճեմարանի մանկավարժութեան ուսուցիչ, ուրեմն, իսկապէս ասած, ճեմարանի ուսումնական մասի գլխաւոր առաջնորդ։ Բայց այս տարվայ նոր, յանկարծակի և անակնկալ տնօրէնութիւնները և յեղափոխութիւնները՝ իմ կարծիքով բոլորովին առաջին նախագիծը տակնուվրա արին։ Մենք այդ տնօրէնութիւնների արժանաւորութեան մասին ոչինչ չենք կամենում ասել, այդ կը ցոյց տայ ապագան, միայն այժմ հարկաւոր ենք համարում յայտնել, որ այժմեան գործող անձինքների նշանակվելը հ. Ստեփանէին հեռացնել կը նշանակէ։ Պ. Սեդրակ Մանդինեան հրաւիրված է ճեմարանի համար մանկավարժութեան ուսուցիչ, ուրեմն և Խորէն Ստեփանէին այլ ևս տեղ չը կայ, որովհետև նոյն առարկայի համար էր նա ուղարկված Եւրօպա և նոյն նպատակի համար էր նա այսքան ժամանակ այնտեղ աշխատում։ Այսպէս հ. Ստեփանէն մնալու է առանց գործի և գուցէ նորա ամբողջ մի տարուայ աշխատութիւնը Եւրօպայում ի զուր անցնի մեզ համար։

Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը, մենք հետեւեալ առաջարկութիւն ենք անում։ Պ. Սանասարեանցը Կարինի մէջ բաց է անում դպրոց։ Որպէս զի այդ դպրոցը չը լինի մեր բազմաթիւ անգոյն դպրոցներից մէկը, պ. Սանասարեանցին անշուշտ հարկաւոր կը լինի ընտրել մի հասկացող, եռանդոտ և հայ հոգւով մանկավարժ, որը կարողանար յիրաւի դպրոցին մի յայտնի, ժամանակին, տեղին և հանգամանքներին յարմար ուղղութիւն տալ նոր մանկավարժական հիմունքների վրա։ Այդպիսի յարմար և բոլորովին գործին ընդունակ մարդ մենք գտնում ենք հ. Խորէն Ստեփանէին, որը կարող էր Կարինի մէջ հիմնելի դպրոցի արժանաւոր տեսուչ լինել։ Սրա վրա կը դարձնենք պ. Սանասարեանցի ուշադրութիւնը։ Մենք յոյս ունենք, որ նա կը համոզվի այս առաջարկութեան օգտակարութեան մէջ և կը հրաւիրէ Հ. Ստեփանէին ընդունել այդ վսեմ պաշտօնը, եթէ արդէն յանձնած չէ ուրիշին։

Ցուսով ենք նոյնպէս, որ հ. Խորէն Ստեփանէն կընդունի այս մեր առաջարկութիւնը։ Թող մի փոքր մեր ուսումնական գործողները իրանց ուշադրութիւնը դարձնեն Հայաստանի վրա և յանձն առնեն առաջնորդութեան պաշտօնը, առնեն իրանց վրա խաչը և մտնեն այդ աւերացեալ երկիրը ժողովրդին յարութիւն տալու։ Էջմիածնի ճեմարանի համար փողով այնտեղի տնօրէնների ճաշակին համեմատ շատ մարդիկ կը գտնվեն, բայց Հայաստանի համար սակաւ են.... Թող մեր կողմից հ. Ստեփանէն առաջինը լինի, որը իբրև հոգևորական անձն, շատ և շատ առաւելութիւն կունենայ ներկայ հանգամանքներիս մի այդպիսի գործի մէջ։ Ցոյս ունենք, որ եթէ այս մեր առաջարկութիւնը ընդունվի, հ. Ստեփանէի եռանդուն գործունէութիւնը շարժումն ձգէ Կարինի մէջ, ինչպէս որ այդ կատարվեցաւ Թիֆլիսում չնորհիւ դրա 1868 թ., երբ առաջին անգամ բացվեցաւ Մարիամեան օրիորդական դպրոցը, այդ սկզբնապատճառը մեր բոլոր օրիորդական դպրոցների, երբ հայ ժողովուրդը Թիֆլիսում առաջին անգամ զգաց և հասկացաւ կանանց կրթութեան նշանակութիւնը։

Սրա վրա դարձնում ենք և «Մշակ» լրագրի խմբագրութեան, նոյնպէս և կ. Պոլսոյ Գեր. Ներսէս Պատրիարքի ուշադրութիւնը։ Մենք կարծում ենք, որ ժամանակ է օգուտ քաղել մեր մէջ եղած ուժերից, որոնց թիւը շատ սակաւ է։ Ներսէս Պատրիարք հօր ուշադրութիւնը դարձնում ենք Խորէն վարդապետ Ստեփանէի վրա, որը կարող է մեծ ծառայութիւն անել մի վարժապետանոցի ևս, եթէ Պատրիարք հայրը հիմնելու լինէր Կ. Պոլսում, ուր մի այդպիսի ուսումնարանի մեծ և անհրաժեշտ կարօտութիւն է զգացվում։

Յակոբ Տէր-Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վաղը, ուրբաթ օր, օգոստոսի 28-ին հայ թատրոնասէրների խումբը յօգուտ գիմնազիայի վեցերորդ դասատան ուսանող Միրզեանցի ներկայացնելու է Արծրունու թատրոնում «Մի թաս թէյ» վոդեվիլ 1 արարուածով, թարգ. Յ. Տէր-Գրիգորեանի, «Տիկինը նրան սպասում է» վոդեվիլ մէկ արարուածով, թարգ. Յ. Մելիք-Յակոբեանի և Զաւեշտ, որի ժամանակ պ. Միրզեան կը կարդայ, պ. Տէր-Գրիգորեան կերգէ կոմիքական կուպլետներ, տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերգէ, պ. Սուքիասեանը կերգէ, պ. Աբրաշէս Յակոբեանը կը կարդայ։ Տեղերի գինը սովորական է։ Պ. Միրզեան, որի օգտին տրվում է այդ ներկայացումը, հանդուցեալ դերասան Միրզեանի եղբայրն է, որ 12 տարի չարունակ իր անձնուէր ընկերների խումբի մէջ եռանդով նպաստում էր հայ թատրոնի գործի աջողութեանը, այնպիսի ժամանակ, երբ դերասանի աշխատանքը կամ բոլորովին չէր վարձատրվում կամ մի 3 կամ 4 ռուբլ էր ընկնում թատրոնական այդ խմբի անդամին իւրաքանչիւր ներկայացման համար։ Հանդուցեալ Միրզեանի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Սխալ տեղեկութիւն «Journal d'Orient»-ի մասին։—Խմբագրի նամակը ինձ։—Նրա պայմանները և իմ խորհուրդը։—Մանկունու արձանը։—Թիֆլիսի վաճառականի տուած օգուտը տաճկահայերին։—Հրաւէր մեր փաստաբաններին։

—

Չը գիտեմ որտեղից է վերցրել «Մշակը», թէ Վիէննայի «Journal d'Orient»-ի խմբագիրը դիմում է հայերին օժանդակութիւն խնդրելով իր ձեռնարկութեան համար։ Այդ լուրը բոլորովին սխալ է։ Եթէ յիշեալ լրագրի խմբագրութիւնը մտցնում է իր օրգանի մէջ հայկական բաժինը, կը նշանակի նա լաւ ծանօթ է հայկական կեանքին և առհասարակ հայերի բնաւորութեանը, իսկ եթէ ծանօթ է, ուրեմն անշուշտ պէտք է իմանար թէ հայերից սպասել դրամական օգնութիւն մի և նոյն է թէ ադռաւից կաթ։ Եւ այդ հանգամանքը նրան քաջ յայտնի էր։ Ես իմ ձեռքումս ունեմ մի նամակ յիշեալ թերթի խմբագրից, որից պարզ կարելի է եզրակացնել, որ թերթի նպատակը և բաժանորդագրութեան պայմանները բոլորովին ուրիշ են։

Ահա ինչ է գրում յարգելի պարոնը։

«Հմուտ բժիշկը, ցանկանալով առողջացնել իր հիւանդին, աշխատում է միշտ նրա խաթրին չը կպչել և առհասարակ յարմարվել նրա բնաւորութեան և հոգեկան պահանջների հետ։ Իսկ եթէ հմտութեան հետ կապված է և իդեալական մարդասիրութիւն, այն ժամանակը բժիշկը հիւանդին առողջացնելուց յետոյ ոչ մի նիւթական շնորհակալութիւն չէ սպասում նրանից, այլ բաւականանում է միայն այն համոզմունքով թէ մի մարդու կեանք խլեց մահի բերանից։ Այդ համոզմունքը և առողջացած հիւանդի պլատոնական շնորհակալութիւնը հմուտ և մարդասէր բժշկի համար բաւական է։ Փոյթ չէ թէ նա դեղ ու դարմանի համար ծախսեր է արել մի քանի տարի չարունակ և դրանով բոլորովին աղքատացել, նա գործել է յանուն մարդասիրութեան և նրա ստացած բարոյական բաւականութիւնը բոլորովին վարձատրում է նրան։

«Հայոց ազգը այսօր քաղաքապէս մի հիւանդ մարմին է։ Ես—համարձակվում եմ կարծել—մի հմուտ և մարդասէր պուբլիցիստ—դիւանագէտ եմ։ Իմ բարոյական պարտականութիւնս է նպաստել բոլոր ուժերով թէ մտաւոր և թէ նիւթական այդ ազգի վերականգնմանը։ Մանկութիւնից իմ մէջ ծնել է սաստիկ սէր դէպի հայերը, և, ճշմարիտ, չէ կարելի չը սիրել հային նրա թէ ներքին և թէ արտաքին արժանաւորութիւնների համար։ Ամենաբարձր էստետիքական վայելչութիւն է ինձ համար նայել նրա հաստ քթի վրա, իսկ նրա հոգին, չէ՞ որ նրա մէջ բարոյականութեան մի ամբողջ կօդեկս է պարունակվում։ Ես սիրում եմ հայերին, և իմ սիրոյ ապացոյցը լրագրիս հայկական բաժինն է։ Բոլոր ունեցածս—չունեցածս պէտք է ծախեմ, դնեմ լրագրիս վրա, որ կարողանամ հայերին օգնել։ Դրամական օժանդակութիւն նրանցից ես երբէք չեմ յանդգնի պահանջել, որովհետև երբէք չեմ ցանկանայ վիրաւորել իմ մեծաքիթ և հաստափոր սիրելիներին։ Լրագիրս ամեն մի հայ կարող է ստանալ «ձրիապէս» յայտնելով ինձ իր հասցէն»։

Ահա Journal d'Orient-ի պայմանները։

Իմ կարծիքով այդ պայմանները այնքան ձեռնտու չեն հայերի համար, որքան կարծում է պատուելի խմբագիրը։ Կարդալուց ինչ օգուտ՝—ոչ փորդ կը կշտանայ, ոչ էլ ջէրդ մի բան կընկնի, միայն զուր տեղը ժամանակդ կը կորչի։ Ես, ինչպէս հայ, լաւ ծանօթ լինելով իմ արիւնակիցների պահանջների հետ, առաջարկում եմ պարոն խմբագրին փոքր ինչ փոխել պայմանները։ Ես խորհուրդ կը տայի հետևեալ կէտերը մտցնել։

1) Ամեն մի բաժանորդ բացի լրագիրը ձրի ստանալուց կը ստանայ ամսական 10 ռուբլ խմբագրութիւնից։

2) Որպէս պրեմիա տարուայ վերջը տղամարդ բաժանորդներից ամեն մէկը կը ստանայ 20 շիշ ընտիր գինի, 2 արկղ պատուական սիգար, մի արկղ փայլուն կարտ և մի ֆրանսուհի գեղեցիկ աղախին։ Գեղեցիկ սեռից բաժանորդները կըստանան 10 ֆունտ կոնֆեկտ, 5 կօրօբկա պուդր, ռեխը զուարթացնող հեղուկից մի շիշ, որ պատրաստված է «Sahr-Sibile» բաղադրութիւնից և մի шапка-невидимка, որի տակ համարձակ կարելի է լօրի ամուսնու հէնց քթի առաջ սիրեկանի հետ մաչխուլաթ անել։

3) Վերջապէս ամեն մի բաժանորդ Վիէննա

նոյն իսկ հիւանդութեան և մահուան պատճառը ներկայացման ժամանակ բեմի վրա մրսելն էր։ Երիտասարդ Միրաղեանը, որ սիրողների ներկայացման ժամանակ ցոյց է տուել որ ունի տաղանդ, իր ուսումը աւարտելուց յետոյ մտադիր է նուիրվել թատրոնական գործունէութեանը։ Հրաւիրում ենք հայ հասարակութեանը անտարբեր չը գտնվել դէպի այդ բարի գործը և միջոց տալ պ. Միրաղեանին շարունակել իր ուսումը։ Մենք գիտենք, որ եթէ ուրբաթվայ ներկայացմանից մի գումար չը գոյանայ, պ. Միրաղեան ստիպված կը լինի թողնել գիմնազիա։ Ցոյս ունենք, որ մանաւանդ այն անձինք, որոնք մի ժամանակ օգուտ են քաղել հանդուցեալ դերասան Միրաղեանի ծառայութիւններից, չեն զլանայ իրանց օգնութիւնը երիտասարդ ուսանողին։

—

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար ստացանք պ. Գրիգոր Եարալեանցից 4 ռուբլ։ Առաջվայ փողերի հետ կանի 66 ռուբլ։

—

«Терскія Вѣдом.» լրագրին գրում են օգոստոսի 15-ից Նաուրսկայա ասված ստանիցայից, որ Թերք գետի ամբողջ ընթացքի վրա գտնվող երկիրներում անտանելի շոգեր է անում։ Զորութիւնը շարունակվում է մի ամսից աւելի։ Անձրևի բացակայութեան պատճառով թողը ճանապարհներում աննկարագրելի է. թէ ճանապարհորդել, թէ վերջապէս շունչ քաշել դժուար է։ Կենդանիների ժանտախտը շարունակվում է և գիւղերից շատերի մէջ բնակիչները կորցրին իրանց ամբողջ տաւարը։

—

Կիրակի, օգոստոսի 23-ին եղաւ ժողովրդական զբօսանք Թիֆլիսի Ալէքսանդրեան այգիում, յօգուտ մեր քաղաքում հիմնվող որբանոցի։ Ռուս «Кавказъ» լրագրին հաղորդում են որ այդ զբօսանքը տուեց ընդհանուր արդիւնք 147 ռուբլ։ Ծախսը դեռ յայտնի չէ։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ կոմս Կուտայսով, որ կառավարութեան հրամանով հետազօտեց հրէական խնդիրը հարաւային Ռուսաստանում, կը ներկայացնէ իր հետազօտութիւնների մասին զեկուցում մի առանձին յանձնաժողովին, որ կը զբաղվի հրէական խնդրի բազմակողմանի քննութեամբ։ Յանձնաժողովի նիստերը կը սկսվեն սեպտեմբեր ամսից և յանձնաժողովի անդամների թւում կը լինի նոյն իսկ կոմս Կուտայսով։

—

Ռուս Նիհիլիստ, իշխան Կրոպոտկին, որին Շվէյցարիան աքսորեց իր նահանգներից, այժմ, ինչպէս հաղորդում են անգլիական լրագիրները, ապաստան է որոնում Անգլիայում։

—

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար ստացանք պ. Եագոր Զօհրաբեանցից 4 ռուբլ։ Առաջվայ փողերի հետ կանի 70 ռուբլ։

—

Ներկայ համարում տպում ենք պ. Յակոբ Տէր-Յովհաննիսեանի նամակը Աբաս-Թումանից, թողնելով այդ նամակի մէջ յայտնված մի քանի մտքերն ու առաջարկութիւնները իրան նամակագրին։ Լրագրութիւնը այն օգուտն ունի որ միջոց է տալիս ամեն մի հասկացող մարդուն արտայայտել իր անձնական դաղափարները այս կամ այն կարևոր խնդրի մասին։

—

Ստացանք պ. Ս. Գաղեանից 3 ռուբլ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար։ Ուրեմն առաջվայ փողերի հետ կանի 73 ռուբլ։

—

Բաղաքում լուր է տարածված որ մի քանի պարոններ գիտաւորութիւն ունեն հիմնել մի նոր հայոց լրագիր «Խարիսխ» անունով, որ կը հրատարակվի, ինչպէս ասում են, շաբաթը երկու անգամ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐ

—

Շարունակում ենք ծանօթացնել մեր ընթերցողներին «Journal d'Orient» լրագրի 34 համարի յօդուածի հետ։

Հայաստանի այժմեան դրութեան չարիքներից գլխաւորը քիւրդերի արշաւանքներն են, ասում է լրագիրը։ Նրանց պէտք է զբաղել։ Մինչև այժմ այդ չարեցին, չը նայելով որ դա շատ հեշտ բան կը լինէր զօրքերի կառավարիչների համար։ Ուրեմն կամ միջոցները նրանց պակասել են, կամ կամքը։ Ազգաբնակութիւնը ապահովացնելու, նրան վտանգից պաշտպանելու համար, ամենալաւ միջոց կը լինէր յանձնել նոյն իսկ ազգաբնակութեանը ինքն իրան պաշտպանելու հոգսը։ Քրիստոնեայ թէ մահմեական,—նրանց առաջին պահանջը՝ ապահովութիւն է։

Գլխաւոր նահանգապետը, իշխանութիւն կունենար, ուրեմն, կազմակերպել պահապան զօրքերի գունդ (ժանդարմերի) որի պաշտօնը կը լինէր պահպանել հասարակական խաղաղութիւնը։ Այդ զօրաբաժինը պէտք է անխտիր կերպով կազմված լինէր քրիստոնեաներից և մահմեականներից, որոնց փոխադարձ թշական համեմատութիւնը հեշտ կը լինէր սկզբից որոշելու։ Այդ պահապան զօրքի գլխաւորների նշանակութիւնը կախված պէտք է լինէր նահանգապետից, որովհետև նա կը լինէր պատասխանատու սուլթանի առջև կարգի ու հանգստութեան մասին իր իշխանութեան յանձնված նահանգում։ Քրիստոնեաների և մահմեականների միացնելը մի զօրաբաժնի մէջ, որ կազմված է ընդհանուր կարգ և հանգստութիւն պաշտպանելու դիտաւորութեամբ, այն հետևանք կունենար, որ երկու տարրերը միմեանց սերտ կերպով կը մօտենային և կը բարեկամանային միմեանց մէջ։ Այդ մօտեցնելը շատ հեշտ է Հայաստանում, որտեղ գիւղական ժողովուրդը, մասամբ մի և նոյն ցեղական ծագումից լինելով, մասամբ կրելով ընդհանուր թշուառութիւնը, ունի նոյն պահանջները, ուրեմն և նոյն ձգտումները։ Բացի սորանից պետական զօրքերի կառավարիչը պէտք է ամեն բանի մէջ, որ վերաբերվում է երկրի ապահովութեանը, հպատակվէր նահանգապետի հրահանգներին և օգնէր պահապան զօրաբաժնին իր ծառայութեան կատարելում։

Նիւթական ապահովութիւնը այդ ձևով հաստատված լինելով, կարելի կը լինէր, այնուհետև, սկսել պարապել իրաւաբանական յարաբերութիւնների ապահովութեան գործով, այն է արդարադատութեան կազմակերպութեամբ։ Եւ ճշմարիտ, առանց դատաստանական կազմակերպութեան չը կայ ապահովութիւն յարաբերութիւնների մէջ, չը կայ ապահովութիւն պաշտօնեաների գեղծումների դէմ, ուրեմն չը կան գրաւականներ բէֆօրմների և բարելաւութիւնների արդար և տևողական գործադրութեան համար։ Այժմեան արդարութիւնը տրվում է մէջլիսներում, որոնց անդամները, հարկերի կապալառուներ լինելով, միջապէս թէ անմիջապէս խառն են վարչութեան գործերին և չունեն, բացի սրանից օրինագրքի և օրէնքների մասին ամենատարրական հասկացողութիւն անգամ։ Այդպիսով օրինագիրքը նրանց ձեռքում դառնում է կամայականութեան մի միջոց, որ գործ է դրվում մի ազգաբնակութեան մէջ, որ ընդանցից պակաս էլ գիտէ օրէնքները։ Դժուար է, ի հարկէ, սկզբից ճշդութեամբ որոշել թէ ինչ բնաւորութիւն և կազմակերպութիւն պիտի ունենան դատարանները ժողովրդի քաղաքացիական և առևտրական յարաբերութիւնները կանոնաւորելու համար, բայց այդ կազմակերպութիւնը, լինելով կանոնաւորիչ ամբողջ վարչութեան, պէտք է հաստատ հիմքերի վրա կայանայ և սկզբից կարելի է ասել որ դատաւորները չը պէտք է մասնակցեն, ինչպէս այժմեան մէջլիսներում, վարչական գործերին։ Գլխաւոր նահանգապետը պէտք է ուսումնասիրի խնդիրը հասկացող անձանց միջից յանձնաժողովներ կազմելով և իր մշակված ծրագիրը պէտք է ենթարկէ այն իշխանութեանը, որ հրահանգիչ այժ ունի օրէնսդրութիւնը գործ դնելու։ Այդպիսով հաստատացած կը լինենք որ արդարադատութեան կազմակերպութիւնը համապատասխան կը լինի, որքան հնար է, երկրի հասարակական և մտաւորական դրութեանը։ Արդարութիւնը պէտք է կատարի գսպող և հսկող այժի դերը վարչութեան վերաբերութեամբ, յանձաժողովը պէտք է որոշի դատարանի և վարչութեան սահմանները և ոչ չափով վարչութեան պաշտօնեաները կախված կը լինեն դատարանից իրանց պաշտօնների մէջ գործած զեղծումների վերաբերութեամբ։

Նահանգապետը իրաւունք պէտք է ունենայ կանչել այդ աշխատանքին մասնակցելու համար և օտար տարրերը, այն չափով, որ նա լինքն յարմար կը համարի։ Հայերը ընդդէմ չեն որ օտար տարրերը, որոնք կը ներկայացնեն բնաւորութեան անկախութիւնը և եւրոպական գիտութիւնը, մանէին յայտնի համեմատութեամբ բարձրագոյն դատարանի կազմակերպութեան մէջ։ Եւ այն ժամանակ դատարանի իրաւասութեանը կարելի էր ենթարկել վարչութեան պաշտօնեաների գործած զեղծումների քննութիւնը։

Երբ ազգաբնակութեան դրութիւնը ապահոված կը լինի պահապան զօրաբաժնի և արդարադատութեան միջոցով, մենք ստիպված կը լինենք ուղղել այնուհետև մեր ամբողջ ուշադրութիւնը մի երրորդ չարիքի վրա, որ ընդհանուր է արևելքում։ Դա հողային հարկերի ձևն է, որ կայանում երկրի բերքից տասանորդ վերցնելում։ Այդ հարկը պէտք է կերպարանափոխվի և տասանորդից դառնայ հողի յատկութիւնից և ընդարձակութիւնից վերցվող հարկը։ Հնդկաստանում, քան և հինգ տարվայ ընթացքում Բոմբայի հողային հարստութիւնը աւելի քան կրկնապատկվեց, երբ անգլիացիները տասանորդի տեղ հաստատեցին land-tax ասված հողային հարկը, որ վերցվում է հողի յատկութեան և նրա ընդարձակութեան հիման վրա։

Այդ երեք բէֆօրմները, եթէ լուրջ կերպով ձեռնարկված և կատարված կը լինեն, բաւական են զարգացնելու և կատարելապէս կերպարանափոխելու երկիրը։ Բայց այդ բարենորոգումների իրագործման համար, նահանգապետը պէտք է վայելի բաւական ընդարձակ իշխանութիւն և բաւականացուցիչ նիւթական միջոցներ։

Այդ յօդուածից Վիէննայի ֆրանսիական լրագիրը դուրս է բերում մի քանի եզրակացութիւններ, որոնց հետ մենք կաշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին «Մշակի» հետևեալ համարներում։

—

գալիս իրաւունք ունի վեր գալ խմբագրի տանը և «ձրի» ուտել, խմել ու նրա կառքովը ման գալ։

Ահա ինչ տեսակ պայմաններ են ձեռնտու հայի համար։

Եթէ խորհուրդս ընդունվի խմբագրութեան կողմից, բաժանորդների թիւը չեմ կարծում, որ քիչ լինի։ Գոնէ ես հաստատ կարող եմ ասել որ մի քանի օրինակ կը ստանայ հէնց երևանցի Սարգիս Անանովը և գարնանը, Աստուած յաջողի, իր չաթրի վրա անշուշտ Վիէննա շնորհք կը բերի։ Ղազար Տէր-Ղազարեանցին էլ կարծեմ շատ ձեռնտու կը լինէր մի քանի օրինակ ստանալ։ Մանկունին և Մամբրէն անկասկած առաջին բաժանորդների թւում կը լինեն։ Իսկ Թիֆլիսի sui generis ինտելիգենցիային պատկանողները պրեմիայի համար խօ գլուխ կը պատռեն։ Էլ չեմ խօսում հաստափոր վաճառականների վրա՝ նրանք մշտական երդուեալ բաժանորդներ կը լինեն։

Այսպիսով Վիէննայի լրագիրը կը ծաղկի և շուտով պտուղներ կը տայ։ Հայերը կը վայելեն նրանց և խմբագրի ասկորներին «մուֆթա» ողորմի կը տան։ Գուցէ նրան արձան էլ կանգնացնեն։ Բայց ոչ՝ «յարգս յարգաւորաց, պատիւս արժանաւորաց»—ասում է առածը։

* * *

Հայերը հասկանում են թէ ով է արժանի, որ արձան դրվի նրա համար։ Գոնէ ներկայումս ամենաարժանի մարդը Մանկունին է։ Հասարակութիւնը, ինչպէս լսում ենք, արդէն ընտրել է իր միջից մի յանձնաժողով, որին յանձնված է մշակել Մանկունու արձանի ծրագիրը։ Յանձնաժողովի նախագահն է «Մշակի» խմբագիրը, որ մի և նոյն ժամանակը ասում են մի նշանաւոր գումար է զոհել այդ համակրելի գործի համար։ Այո, գովելի է հայ հասարակութեան այդ ազգասիրական եռանդը։ Մեղք է, որ Մանկունու պէս մարդու յիշատակը ոչնչանայ նրա մահից յետոյ։ Թէև նրա գործունէութիւնը այնքան նշանաւոր է, որ նրա անունը դեռ շատ տարիներ հասարակութեան բերնում կը լինի, այնու ամենայիւ արձանը անհրաժեշտ է նրա համար, որ ապագայ սերունդները մշտապէս տօնեն այն անձնանուէր հոգևորականի յիշատակը, որ չօջուզութիւնից կարճ միջոցում եպիսկոպոսական աստիճանին հասաւ, որ չունենալով ոչ մի իրաւունք de jure ձեռք բերեց բոլոր իրաւունքները de facto, որ գիշեր ցերեկ քունը կտրած իր բարեկամ Ստեփանիկի հետ միասին աշխատում էին հարստացնել էջմիածինը ամեն միջոցներով, մինչև անգամ իրանց սեփական կայքերը և ազգականների կարողութիւնը զոհելով վանքի գանձարանին, որի միջոցով էջմիածինը մեծ զարկ տուեց հայկական խնդրին, ահագին օժանդակութիւն սովեալներին, որ կարճ միջոցում ոչնչացրեց սիմօնականութիւնը, որ սաստիկ տաքացրեց էջմիածնի և հայ հասարակութեան մէջ եղած յարաբերութիւնները, որի խմբագրութեամբ վերջապէս հրատարակվում էր մեր պարբերական մամուլի թագն ու պսակ, փառք ու պարծանք «Արարատ» արժանապատիւ ամսագիրը։ Այսպիսի գործիչին արժանի է արձան կանգնացնել։

* * *

Մենք հէնց գանգատվում ենք, թէ մեր վաճառականները չեն նպաստում տաճկահայերի դրութիւնը բարւոքելու հարցին, չեն օգնում նրան գոնէ նիւթականապէս։ Ինչ զրպարտութիւն! օգուտ չէ՞ միթէ տաճկահայերին, որ օրերումս Մարգարեանի չինութեան մէջ հողը փուլ եկաւ, իր տակ թողնելով մի քանի ողորմելի, թշուառ հայ մշակների։ Վաճառականներից, այն էլ թիֆլիսի հաստափոր, տուզացած վաճառականից դրանից աւելի ինչ օգուտ սպասել։

Ո՞վ դուրս կը գայ արդեօք որբացած, անբաղդ ընտանիքների շահերին պաշտպան... խեղճ կինը երեխաները գլուխը ժողոված, քաղցած, ծարաւ, տկլոր, աչքը ջուր դառած ճանապարհին սպասում է, թէ երբ պէտք է վերադառնայ Ռուսաստանից ընտանիքի հայրը մի քանի տարվայ դառն քրտինքով աշխատած ապրուստով, բայց հայրենական քաղցը հողից, կնօջից և երեխաներից զրկված թափառական մշակը այսօր փնչում է իր տանջված հոգին վաշխառուի փլատակների տակ!..

Ո՞ւր էք, պոռոտախօս փաստաբաններ! ֆանֆարօնութեան ու միամիտների աչքը թոզ փչելու մէջ չէ ազգասիրութիւնը։ Եթէ մարդասիրութեան գոնէ մի նշոյլ կայ ձեր սրտի մէջ, պաշտպանեցէք թշուառ ընտանիքների շահերը։ Ձեր առաջն եմ դնում Плевако-ի օրինակը, որի խօսքը միշտ պաշտպան է եղել թշուառին, հարստահարվածին, նեղուածին, որի բերանից միշտ կայծակի շանթեր են թափվել հարստահարողի, ճնշողի, վաշխառուի գլխին։

Նկատող

ԲՈԼԳԱՐԻԱ

Նորերումս իշխան Ալէքսանդր մի ազդարարութեամբ դիմեց բոլգարացի գումարատէրերին, հրաւիրելով նրանց մասնակցել բոլգարական հանրաօգուտ ձեռնարկութիւններին: Երկրի մէջ հարուստ մարդիկ շատ կան, բայց նրանք չեն ցոյց տալիս իրանց հարստութիւնը, երկիւղ կրելով հարկերի բարձրանալուց և հաւատ ընծայելով միայն ոսկուն, որ նրանք գետնի մէջ թաղված են պահում կամ տալիս են մեծ տոկոսներով: Այդ պատճառով իշխանի ազդարարութիւնը շատ փոքր աջողութիւն ունեցաւ: Միայն մի քանի գումարատէրեր, որոնք փոքր ի շատէ քաղաքակրթված են, միացան շինութիւնների ընկերութիւն կազմելու համար 10 միլիոն ֆրանկ մայր գումարով: Այդ ընկերութիւնը կառավարութեան աջակցութեամբ ձեռնարկում է տների, կամուրջների և ճանապարհների շինութեանը: Սոֆիայի մէջ ներկայումս ամենքը շինութիւններով են զբաղված: Այժմ կառուցանվող իշխանական պալատի և կոնակի մէջ մի ամբողջ եւրոպական թաղ է կազմվում: Կառուցանվում են նոր զօրանոցներ, նոր տներ մինիստրների համար և այլն: Այդ բոլորի համար դրամ է հարկաւոր և խնայող բոլգարացիները գլուխը շարժում են, նկատելով, թէ ինչպէս սպառվում է նրանց պետական գանձարանը, իսկ հարկերի քանակութիւնը աւելանում է:

Գերմանացիների գործունէութեան մասին Բոլգարիայում „Köln. Ztg.“ լրագրին հաղորդում են Բոլգարիայից: Սոֆիայի մէջ սկսված շինութիւնները բաւական շատ գերմանացիներ գրաւեցին: Գերմանացիները կառուցին ռուսաց հիւպատոսի տունը, այդ փոքրիկ պալատը մի քանի ընտանիքների համար: Հիւսիսային Գերմանիայի շատ տեղերից խնդրում են բոլգարական կառավարութենից թոյլտուութիւն Բոլգարիա գաղթելու համար: Բայց այդ գաղթականութեանը արգելում է սլավեանների ատելութիւնը դէպի բոլգարացիները: Բոլգարական կառավարութիւնը ուրախութեամբ կօգնէր այդ գաղթականութեանը, բայց նա պաշտօնապէս ոչինչ չէ կարող անել: Սլավեական ուղղութիւնը չափազանց ուժեղ է:

Այնու ամենայնիւ գրամատէր գերմանացիները կարող են գալ Բոլգարիա և սպասել մինչև ժամանակով կը կարողանան հողեր գնել: Այդպիսի գաղթականները անպատճառ պաշտպանութիւն կը գտնեն բոլգարական կառավարութեան կողմից:

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են, որ այնտեղ լուր է տարածված, իբր թէ մի դաւադրութիւն է յայտնված սուլթանին սպանելու նպատակով: Ասում են, որ այդ յանցանքը մտադրվել են ճայթող ռումբերի օգնութեամբ կատարել: Կասկածում են, որ պալատականները դիտմամբ տարածել են այդ լուրը սուլթանին վախեցնելու և նրան պալատական կուսակցութեան ազդեցութեանը կատարելապէս ենթարկելու համար:

„Իցցեդին“ շոգենաւը, որ աքսորատեղի է տանում սուլթան Աբդուլ-Ազիզի սպանման մէջ մեղադրվածներին, հասաւ Ջէդդա: Դատապարտվածները յանձնված են Հեջասի նահանգապետի հսկողութեանը, որ պարտաւորված է հասցնել նրանց Տաիֆ: Մեղադրվածներին ուղեկցող սուլթանի ադիւտանտը ուղևորվեցաւ Մեկկա, տանելով մեծ շերիֆին սուլթանի կողմից 30,000 ֆրանկ ընծայ և սուլթանի ձեռքով գրված նամակը:

Մեցօվօի մօտ աւազակները դերի են առել անգլիական և իտալական հաւատարմատարներին, որոնք նշանակված էին անդամներ այն մասնաժողովի, որ պէտք է յանձնէր Ցունաստանին զիջած երկիրները: Վերջին հեռագիրների մէջ ասված է, որ այդ լուրը չափազանցրած է: Անգլիական հաւատարմատարը թիւրք պահապանների ուղեկցութեամբ ճանապարհ էր ընկել: Նրանց վրա յարձակվել են աւազակները, որոնք առաջ յետ էին մղվել պահապաններից, բայց երբ սպանվել էր վերջինների հրամանատար օֆիցերը, անգլիական հաւատարմատարը գերի էր ընկել: „Daily News“ լրագրի տեղեկութիւնների համեմատ աւազակները 40,000 ֆունտ ստերլինգ վարձատրութիւն են պահանջում անգլիական հաւատարմատարին ազատելու համար: Այդ մասին անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնը դեռ ևս պաշտօնական տեղեկութիւններ չէ ստացել:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական պարլամենտական ընտրութիւնների հետևանքները յայտնի եղան, բայց վիճելի է այն հարցը, թէ ինչպիսի ազդեցութիւն կունենան այդ ընտրութիւնները ֆրանսիական ներքին գործերի ընթացքի վրա: Մի քանիսը պնդում են, որ պատգամաւորների ժողովի արմատական տարրը ուժեղացել է, միւսները հաւատացնում են, որ չափաւոր կուսակցութիւնը և Գամբետտայի մինիստրութիւնը ապագայ ժողովի մէջ գերակշռող դեր կը խաղան: Մի քանիսը ասում են, որ Գամբետտայի հեղինակութիւնը նուազած է, իսկ միւսները հաւատացնում են, որ Գամբետտա, ներկայումս աւելի նշանաւոր մեծամասնութիւն իր կողմն ունենալով, կը սկսի իսկապէս առաջնակարգ դեր խաղալ Ֆրանսիայի մէջ: Ակներև է միայն, որ հանրապետութեան թշնամիները կատարելապէս յաղթված են և որ հանրապետութեան թշնամի բոլոր կուսակցութիւնները պէտք է վերջնականապէս հրաժարվեն իրանց յոյսերից: Այդ հանգամանքը ապահովում է Ֆրանսիայի հանգստութիւնը և թոյլ է տալիս նրան կատարելապէս ազատ գործել թէ ներքին և թէ արտաքին գործերի վերաբերութեամբ: Քանի որ Ֆրանսիայի պետական կազմակերպութիւնը հաստատ հիմունքների վրա դնվի, այնքան կը մեծանայ նրա միջազգային նշանակութիւնը և ազդեցութիւնը:

Գամբետտայի մօտ բարեկամներից շատերը պարլամենտական ընտրութիւնների ժամանակ սեւացան և ընդհակառակը յաղթեցին այն կանդիդատները, որոնց դէմ գրում էին Գամբետտայի լրագիրները: Մի քանի լրագիրների կարծիքով պատգամաւորների նոր ժողովի մէջ նշանաւոր մեծամասնութիւն կարող է կազմվել, եթէ համաձայնութիւն կայանայ հանրապետական ձախ կողմի և հանրապետական միութեան մէջ: Հանրապետութեան նախագահ Գրեվիի „La Paix“ լրագիրը առաջարկում է ձախակողմեան հանրապետական կուսակցութեանը միանալ հանրապետական միութեան հետ նշանաւոր մեծամասնութիւն կազմելու համար:

Կլեմանսօի „Justice“ լրագիրը նկատում է հետևեալը: „Փարիզը հասկանալի կերպով յայտնեց իր ցանկութիւնը: Կլեմանսօ Մօն-Մարտրի ընտրողական երկու շրջանների մէջ 10,000 ձայներ ստացաւ 3,500 դէմ, իսկ Գամբետտա մինչև անգամ ձայների սովորական մեծամասնութիւն չը ստացաւ: Նա ընտրվեցաւ այն սպիտակ քուէների շնորհիւ, որոնք իսկապէս պէտք է նշանակութիւն չունենան: Բելվիլի երկու շրջանների մէջ էլ Գամբետտա ստացաւ 9,407 ձայն 9,497 դէմ: Դա շատ ցաւալի է մի մարդու համար, որ կամենում է Բելվիլի ձգտումների ներկայացուցիչը լինել:“

Բոշֆոր իր „Intransigeant“ լրագրի մէջ գրում է հետևեալը. „Գամբետտա որ Փարիզի պատերը ծածկեց իր ազդարարութիւններով, ձրիաբար տարածում էր իր լրագիրները, որ իր գործակատարներին 50,000 ֆրանկ վճարեց, յաղթեց միայն մի ձայնի մեծամասնութեամբ: Մակ-Մահօն նախագահ ընտրվեցաւ եօթ ձայների մեծամասնութեամբ, մինչդեռ Գամբետտա նախագահ կը լինի միայն մի ձայնի մեծամասնութեամբ:“

„National“ լրագիրը վտանգաւոր է համարում անհաշտների կուսակցութեան ուժեղանալը: Կլեմանսօի կուսակցութիւնը 50 նոր անդամներ է ձեռք բերել, մինչդեռ նրա նախագիծը պահանջում է՝ հանրապետութեան նախագահութեան, մշտական զօրքերի և սենատի ոչնչացնելը և ազգային գվարդիայի և կոմմունայի հիմնելը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. ԷՄԻՐԻՆ ԵՐԵՒԱՆԻՑ

«Մեղու Հայաստանի» 152 համարում դուք դիմում էք ինձ, խնդրելով պատասխաններ և բացատրութիւններ իմ յօդուածի մասին, որ տպագրվել է «Մշակի» ոչ 159, այլ 105 համարում, Երևանի կանանց լօռօ խաղալու առթիւ: Ես ուրախութեամբ կը պատասխանեմ և կը բացատրեմ, ինչ որ ձեզ և ձեզպէսներին անհասկանալի է միայն այն ժամանակ, երբ յետ կառնէք բոլոր այն յիշողները որ տպագրել էք ձեր յօդուածում և այն ժամանակ կարող եմ սկսել ձեզ հետ գրականական բանակռիւ, որոշ գաղափարների մասին: Թէպէտ և խօսել այսուբէնի վրա ինձ համար շատ ճանձրալի է, բայց այնու ամենայնիւ կը խօսեմ, որպէս զի նախապաշարմունքներով ներշնչուածներին ուղիղ ճանապարհ դուրս բերեմ: Ձեր յօդուածում այս անգամ հարցերը բաւականին լաւ են դրված և կարելի էր պատասխանել, միայն թէ ձեր յիշողներն արգելեցին ինձ, ձեր խնդիրքը կատարել:

Պ. Էմիր, ստորագրելով ձեր յօդուածի տակ կեղծ անուն, տարաբաղդաբար նմանում էք այն փոքրահոգի հերոսին, որ չէ վստահանում հրապարակ դուրս գալ, այլ աշխատում է գողտուկ տեղից գնդակոծ անել այն մարդուն, որի հետ նա մի որ և է հաշիւ ունի: Այդպէս հերոսին հասարակութիւնը չէ կարող զարդարել ազնուութեան պսակով, եթէ գաղափարը լինէր նաև ամենաազնիւ:

Մենք երկուսս էլ ազնիւ ձգտումներ ունենք, կամենում ենք բացատրել հասարակական կամ ընտանեկան մի հարց, ինչու էք ամաչում կամ վախենում ստորագրել ձեր իսկական անունը, ձեր համոզմունքների տակ, մանաւանդ որ աշխատած էք եղել կրիտիկայի ձև տալ ձեր յօդուածին: Մթթէ կրիտիկոսը իրաւունք ունի թագցնել իր անունը: Դուք իրաւունք ունէք թագցնել ձեր անունը, եթէ գրէք բանատեղծութիւն կամ մի որ և է նկարագրութիւն և այլն, այսինքն այնպէս մի բան որ ոչ ոքի չէ վերաբերում, այդպիսի դէպքերում անուն թագցնելը կը նշանակէ, որ դուք համեստութեան պատճառով չէք կամենում յայտնել ձեր անունը, բայց մէկին ուշունցներ տալը և անուն թագցնելը շատ ստոր գործ է, անարժան տպագրութեան:

Ձեր յօդուածից երևում է, որ դուք երևանցի էք, ուրեմն ինձ պէտք է ճանաչէք և լաւ ճանաչում էք, հետևաբար պէտք է գիտենաք, որ ես զարհուրելի և քինառու մարդ չեմ և չեմ կարող վիրաւորել կամ վիրաւորվել այն մարդուց, որ ինձ հետ համամիտ չէ մի որ և է հարցում: Ես կարող եմ հաւատացնել ձեզ, պարոն, որ ով որ էլ լինէք, հարուստ թէ աղքատ, ես ընդունակ չեմ ձեր պատուի որբավայրին մօտենալ: Իմացէք, որ ճշմարտութիւնը չէ կարող կորցնել իր նշանակութիւնը, ով և լինի նորա քարոզողը, ուր մնաց դուք, որ ձեզ կարծել էք տալիս, ինչպէս մտածող անձն: Ես պատրաստ եմ խօսել ձեր և իմ գաղափարների մասին, յարգելով ձեր անձնական պատիւը, առանց ուշադրութիւն դարձնելու այն յիշողների վրա, որ դուք գործադրել էք (զ. օ. խոհեմ դատողութիւնից զուրկ և կրքի ազդեցութեան տակ գրված, ամեն փոքր ի շատէ խոհեմ մտածող մարդու յայտնի է, լոկ և խղճալի ֆրազներ են, կարծեցեալ լուսաւորված: Զրպարտութիւն և կիրք աւելի ոչինչ, ամօթ ու նախատինք է բերում միայն յօդուածագրին և այլն): Ինչը ստիպեց ձեզ, պարոն, թափել ինձ վրա այդ յիշողները. չէ որ իմ յօդուածում ես սաստիկ խօսքերով նախատել եմ երևանցւոց ընդհանրապէս, երեսներով եմ տուել նրանց արարքը և ոչ մասնաւորապէս ձեզ կամ մի ուրիշին: Իմ յօդուածում ոտնակոխ չեմ արել մի որոշ անձնաւորութեան պատիւը, ինչի դուք իրաւունք էք համարել ձեզ, թափել ինձ վրա այդքան յիշողներ: Յիշողները տալով միաժամ խնդրում էք որ բացատրութիւն և պատասխան տամ ձեզ. մթթէ ծիծաղելի և երեխայական չէ ձեր խնդիրը: Ցեսնում էք. պ. Էմիր, որ նաև քաղաքավարութեան ձևերը ձեզ անյայտ են. ի հարկէ «ինչ որ Մուկուչը չի սովորել, Մկրտիչը չի իմանալ»: Ձեր ամբողջ յօդուածի ոգին և ձեր բոլոր յիշողները ապացուցանում են, որ դուք դեռ ընդունակ չէք գրականական ասպարէզ դուրս գալու: Եթէ այդ յիշողները գործադրել էք այն մտքով որ ձեզ անպատճառ պատասխանեմ, սխալվել էք: Իմացէք որ ինչքան աւելի յիշողներ տաք, այնքան աւելի կը զրկվէք պատասխան ստանալու իրաւունքից:

Ե՞րբ պէտք է հասկանան ձեզպէսները, որ ընդհանուր հարցում անձնաւորութիւն վիրաւորելն արգելված է:

Ցեռ առնելով ձեր տուած յիշողները իրաւունք կը ստանաք պատասխանի, հակառակ դէպքում, ոչ երբէք:

Բժ. Լևոն Տիգրանեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 օգոստոսի: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է օգոստոսի 21-ից. Պետերգոֆի մէջ այսօր թագաւոր կայսրը ընդունում է Ստավրոպոլի նահանգապետ Ֆօն-Դենին և Թիֆլիսի նահանգապետ իշխան Գագարինին: Յայտնի պրոֆեսօր Վիրխով ուղևորվում է Կովկաս փորվածների գիտական հետազօտութիւններ անելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 50 կ., երկրորդ 94 ր., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 229 ր. 50 կ., երկրորդ 225 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 87 կ., ոսկի 7 ր. 60 կ.: Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 26,06 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 222 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա արժէ 284 ֆրանկ, 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր., ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պասաելա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամբակէյ 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ լէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 ֆունտ թէյ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.։ ԵՐԿԱԹԷ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։

40—100

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների։

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
անունով **ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ**
դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրավաճառանոցներում։

Գինն է 40 կ՝ օպէկ։

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** վճարելով և ճանապարհածախսը իր վրա առնելով՝

Թող դիմէ մեզ հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ.— На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцъ.“

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կոնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բոկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, ալբոմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկո, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեոնկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՏՏ-ՎԷՑՆ, խերես, կոնեակ և այլն։ ԹԷՑ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մագնեզիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԹԻՆԱՑԻ գինի ջերմի դէմ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկրօգեոտի համար, պարսկական փոշի։ 58—100

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ“

Վերնագրով գրքոյկը, Էջմիածնի և սովատանջների վիմագրական պատկերով։ ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է կենտրոնական գրավաճառանոցում, իւրաքանչիւրը 30 կոպէկով։ Օտարաքաղաքացիք 10-ից ոչ պակաս ցանկացողները առանց փոստայի ծախքը հոգալու, կարող են դիմել Մնացական Բէգլարեանցին հետևեալ հասցէով. Въ Тифлисъ, Верхняя Таможенная улица, № 31, Мнацакану Бегларьянцу.

2—4

ԱՐԴԷՆ ԾԱԽՎՈՒՄ Է „ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“
Անունով մեր ՀՈՐՐՈՐԴ տարուայ դասագիրքը Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

Գինն է 60 կոպէկ

Գումարով առնողներին զիջումն կը լինի։

Իսկ ով ցանկանում է հատը 55 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** վճարելով թող դիմէ մեզ հետևեալ հասցէով.

Въ Тифлисъ.—На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцъ.

Յ. Նազարեանց

10—25

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

տեղափոխվեցաւ Գանձակայ փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՑԻՑԻ փողոցը № 11. փոստատան եռևի քուչան։ Ընդունվում են ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով։

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա։

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻՒ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրոնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի Ծխախոտի մագազինների մոտ։

Գինն է 1 ռուբլ 20 կոպ.։



ՎԱՐՇԱՎԱ։ Իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտուած ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով ծախվում է Եւրօպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրօգիստների մօտ։ Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս **Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ** դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտորալնի փողոց № 35. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ։ պէտք է զգուշանալ խարդախութիւններից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեկնութիւնը և Փարիզի աշխարհանդէսի մեդալները.

Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

18—20 (1)

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի իմ թարգմանած՝ **„ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ ՎՐԱ ՀԻՄՆՈՒԱԾ“** հեղինակութիւն Յ. Բամբասնի։ Ուստի դիմելով այն յարգելի բարեկամաց, որոնք բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, խոնարհաբար խնդրում եմ, որպէսզի օգոստոսի վերջը բարեհաճին յանձնել ինձ բաժանորդութիւնները, որպէս զի կարողանամ աւարտել գրքիս տպագրութիւնը առաջիկայ սեպտեմբերին։ Իմ հասցէն՝ Тифлосъ. Григорію Шахбудагянцу, учителю Армянской Нерсисянъ Духовной Семинаріи.

Գրիգոր Շահբուդաղեանց

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՑԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաւսի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

19—100

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Ընդունելութիւնները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից։ „Մանկական պարտէզի“ մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ «Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները։

Իշխան Ն. Ամատունու տուն, Վելիամինովսկի փողոցի վերայ։

Բ. Միրիմանեանց

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. **„ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“** ծխական դպրոցների 4-դ տարվայ դասընթացք, և միանգամայն 1-ն, 2-դ և 3 տարիների համար հրահանգ։

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

62—150

ПРИСЯЖНЫЙ ПОВѢРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ
Переѣхалъ на Сололакскую улицу, въ домъ К. Меликова.

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ“ продаются слѣдующія нѣмецкія брошюры:

Die Oekonomische Lage der Armenier in der Türkei. von Dr. GRIGOR ARZRUNI. Ubersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.

Die Hungersnoth in Türkisch-Armenien von Dr. GRIGOR ARZRUNI. Ubersetzt von A. Amirchanjanz. Preis 20 kop.

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**։

43—100

ՍՕԾԱԿՆԵՐ կոտրելու փոշի։ Ծախվում է **ԾԱՏՈՒՐՕՎԻ** լամպի մագազինում։

Дозволено цензурою, Тифлисъ 26 Августа 1881 года.
Типографія Главнаго Управенія Намѣстника Кавказскаго.